ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ա Ն Կ Ո Մ Ի Տ Ե

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «28» օգոստոսի 2020թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 03-Ա[1]

ԿԱՐԵՆ ԲՈՐԻՍԻ ՂԱՐԻԲՅԱՆԻՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 16-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության գիտության կոմիտեի գիտության քաղաքականության վարչության պետի (ծածկագիր՝ 18-1-27.1-Ղ3-1) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հարցազրույց անցկացնող հանձնաժողովի եզրակացությունը և Կարեն Ղարիբյանի անձնական դիմումը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ.

1. Կարեն Բորիսի Ղարիբյանին 2020 թվականի օգոստոսի 28-ից նշանակել Հայաստանի Հանրապետության գիտության կոմիտեի գիտության քաղաքականության վարչության պետի (ծածկագիր՝ 18-1-27.1-Ղ3-1) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնում:

2. Կ. Ղարիբյանի ամսական աշխատավարձի չափը սահմանել «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1.1-րդ մասի պահանջներին համապատասխան:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ս. ՀԱՅՈՑՅԱՆ